ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ԴՈՒՍՏՐՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՆԴԱՄՍ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՕՆԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ ՈՐ Ի ԲԵՑՐՈՒԹ, ԼԻԲԱՆԱՆ

Ուրախ ենք մեծապէս, որ առիթ ունենք համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ողջունելու եւ Հայրապետական Մեր օրհնութիւնը բերելու Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումի բարեջան անդամուհիներիդ, որ աշխարհի տարբեր ծայրերից հաւաքուել էք Մայր Հայրենիքում՝ մեր Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանաւորութեան ներքոյ նշելու Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումի հիմնադրման 50-րդ տարեդարձը:

Սիրելի զաւակներ Մեր,

Անցեալ դարի երկրորդ յիսնամեակը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պատմութեան մէջ ցաւալիօրէն առանձնացաւ ներեկեղեցական բարդ յարաբերութիւններով, երբ ստեղծուած ոչ կանոնական վիճակը հանգեցրեց եկեղեցական մեր կեանքի պառակտմանը:

Դժուարին այդ տարիներին Մայր Աթոռիս նեցուկ ու ապաւինութիւն դառնալու առաքելութեամբ Լիբանանում հիմնուեց Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումը: Միաւորուած Սուրբ Էջմիածնի սիրով, Տիկնանց Համախմբումի անդամները իրենց կեանքով ու հաւատոյ գործերով նեցուկ դարձան Ամենայն Հայոց Հայրապետութեանն ու Հայոց Հայրապետին, քաջալերելով մեր ժողովրդի զաւակներին անխախտ պահել հաւատարմութիւնը Սուրբ Էջմիածնին եւ օգտակարութիւն բերել Միածնի Էջքով սրբագործուած մեր հաւատոյ կենտրոնի շինութեանն ու պայծառութեանը: Մենք վկայ ենք եղել, թէ որքան բարձր էր գնահատում ձեր եկեղեցանուէր ծառայութիւնները եւ էջմիածնասէր ոգին երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետը: Մեր գահակալութեան նախընթաց տասը տարիներին Մենք եւս բազում առիթներ ենք ունեցել ուրախանալու Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց համախմբումի կեանքի կոչած եկեղեցաշէն գործերով եւ փառաբանելու Բարձրեալն Աստծուն, որ մեր Եկեղեցուն պարգեւել է ձեզ պէս հաւատաւոր ու ծառայասէր դուստրեր: Ձեր գործերով դուք լուսաւոր նոր էջեր էք յաւելում մեր Եկեղեցու պատմութեան մէջ եւ հաւատաւոր ընթացքով Ամենախնամ Տիրոջ օրհնութիւնը վաստակում ձեր, ձեր ընտանիքների եւ համայն մեր ժողովրդի համար:

Կէսդարեայ յոբելեանի առիթով Միածնի Իջման Սուրբ Խորանի առջեւ աղօթք ենք բարձրացնում առ Աստուած՝ Տիկնանց Համախմբումի ննջեցեալ անդամուհիների հոգիների հանգստութեան համար: Բարի յիշատակ եւ երկնային բարձունքներում երանաւէտ հանգիստ ննջեցեալ հայուհիներին, ովքեր իրենց կեանքով ու բարի գործերով հաւաստեցին իրենց սէրն ու նուիրումը առ ժողովուրդն հայոց, առ Մայր Եկեղեցին եւ Քրիստոսակնիք Սուրբ Էջմիածինը:

Սիրելիներ, իւրաքանչիւր յոբելեան անցեալը գնահատելու հետ մէկտեղ նաեւ սկզբնակէտ է ապագայի գործունէութեան: Յիսնամեայ յոբելեանը խանդավառութեան ու նոր ներշն-

չանքների հարաւէր է ձեզ՝ հայրենապաշտ եւ եկեղեցասէր ոգու մէջ առաւել զօրանալու եւ աստուածահաճոյ նոր նախաձեռնութիւններով ձեր առաքելութիւնը զարդարելու համար: «Հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13):

Հայոց Առաքելահաստատ Սուրբ Աթոռից, Սուրբ Գրիգոր Լուսաւորչի Գահից Հայրական սէր ենք բերում ձեզ ու ձեր ընտանեաց անդամներին: Հայրապետիս աղօթքն է, որ Բարձրեալն Աստուած Իր Ամենախնամ հովանու ներքոյ պահպանի Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց Համախմբումը եւ մշտառաք օրհնութեամբ շնորհազարդի ձեզ ամենքիդ՝ պարգեւելով քաջառողջ, երկար կեանք եւ երկնայեղ ամենայն բարիք:

«Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելո՛ւլ ձեզ յուսով՝ զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. 15.13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 28-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2009 եւ ի թուին հայոց ՌՆԾԸ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 994